

ՓՈՂՈՑՆԵՐ

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Այս շարքում մենք նայեցինք, թե ինչպես է Աստված մեզ անապատում տալիս զորություն, հրաշքներ եվ վտակներ:

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԵՍԱՅԻ 35.8-10

8 Եւ այնտեղ մայրուղի եւ ճանապարհ է լինելու, եւ ճանապարհը սուրբ պիտի կոչվի. Այդ տեղով պիղծը չպիտի անցնի. նա նորանցն է. Մտամոլոր մարդիկ անգամ, այդ տեղով ընդհանալով, չպիտի մոլորվեն: 9 Այնտեղ առյուծ չի լինիլու ու չար գազաններից ոչ մեկն այն տեղով չի անցնելու. Այդ տեղով պիտի գնան փրկվածները և Տիրոջ համար հավաքվածները: 10 Եւ Տիրոջ փրկվածները պիտի վերադառնան ու բարձրաձայն երգերով գան Սիոն, եւ նորանց գլխի վրա հավիտենական ուրախություն պիտի լինի. ուրախությունը պիտի դիմավորի նրանց, ցավը, տրտմությունն ու հեծությունը փախչելու է:

I. ՇՆՈՐՀԻ ՓՈՂՈՑ: ՀՈՎ. 1:17 - ՇՆՈՐՀՔԸ ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՁԵՌՈՎՆ ԵՂԱՎ:

8 Եւ այնտեղ պողոտա եւ ճանապարհ է լինելու, եւ ճանապարհը սուրբ պիտի կոչվի.
9 Այդ տեղով պիտի գնան փրկվածները և Տիրոջ համար հավաքվածները:

Հով. 14:4-6 - 4 Եւ որ տեղ որ ես գնում եմ՝ գիտէք, եւ ճանապարհը գիտէք: 5 Թովմասը նորան ասեց. Տէր, մենք չգիտենք թէ որտեղ ես գնում. եւ ինչպէ՞ս կարող ենք ճանապարհը գիտենալ: 6 Յիսուսը նորան ասեց. Ես եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը. ոչ ով չի գալիս Հօր մօտ, եթէ ոչ ինձանով:

Ես գտել եմ մի Ճանապարհ,
Որ տանում է դեպի երկինք,
Շատ է դարձել ինձ հարազատ,
Կյանք պարգևող այդ ճամփան:

Ճանապարհ, ճանապարհ,
Շատ եմ փնտրել քեզ երկար,
Ճանաւարհ, ճանապարհ,
Քո ճամփեքով ինձ տուն տար:

Հիսուսն ասաց Ես եմ Ճամփան,
Կյանքն ու Ճշմարտությունը
Ով ընտրում է կյանքի ճամփան,
Ես նրան հանգիստ կտամ:

Մատ. 7:13-14 - 13 Մտէ՛ք նեղ դռնով. Քանզի լայն է դուռը եւ ընդարձակ ճանապարհը՝ որ դեպի կորուստ է տանում. եւ բազմաթիվ են նրանք որ մտնում են նորանով: 14 Ինչքա՜ն նեղ է դուռը՝ եւ նեղվածք է ճանապարհը, որ տանում է դեպի կեանքը. եւ քիչ են նորան գտնողները:

- ***«Ճանապարհ» այս անունը լայնորեն օգտագործվում էր Գործք Առաքելոցում:***

*Գործ. 9:2 - Եւ նրանից թղթեր խնդրեց Դամասկոսում ժողովարանին ուղված. Որպըսզի եթէ գտնի **այն ճանապարհին հետեւող՝** որեւէ մէկին, տղամարդ թէ կին, նորանց կապված Երուսաղէմ բերի:*

*Գործ. 19:9 - Եւ ոմանք խստասիրտ էին մնում եւ ընդդիմանում՝ բազմութեան առաջ վարկապեկելով **Տիրոջ ճանապարհը,** նա բաժանվեց նորանցից՝ եւ աշակերտներին զատեց. Եւ խօսում էր ամեն օր Տիվրան անունով մեկի դպրանոցում:*

23 Եւ այն ժամանակ Տիրոջ ճանապարհի մասին մեծ խռովություն եղավ:

Գործ. 24:22 - Մեռելների հարության համար է, որ ես այսօր ձեզանից դատվում եմ: Փելիքսը երբոր լսեց այս բաները, նորանց գործը հետաձգեց, քանի որ ավելի ստույգ գիտեր այն ճանապարհի մասին.

Վատ շնորհ գոյություն չունի: Կա միայն լավ շնորհ: Կարևոր չէ, թե դու ինչ ես արել: Կարևոր է միայն այն, թե ինչ է Հիսուսն արել:

Այդ տեղով պիղծը չպիտի անցնի. նա նորանցն է. Մտամոլոր մարդիկ անգամ, այդ տեղով ընհթանալով, չպիտի մոլորվեն:

*Գործ. 10:14-15 - 14 Եվ Պետրոսն ասաց. Քավ լիցի, Տէր, որովհետեւ ես երբէք **պիղծ կամ անմաքուր** բան չեմ կերել: 15 Եւ դարձեալ երկրորդ անգամ ձայն նորան հասավ, Այն որ Աստուած սրբեց, դու պիղծ մի համարիր:*

Saudi Arabia Illustration: We ate with them.

Գործ. 10:28 - 28 Եւ նրանց ասաց. Դուք ինքներդ գիտէք, թէ ինչպէս կարելի չէ Հրէայ մարդու համար մի օտարազգու դպչիլ կամ մօտենալ. Բայց Աստուած ինձ ցույց տվեց, որ մարդկանցից ոչ մէկին չպետք է պիղծ կամ անմաքուր համարեմ:

*Գործ. 15:8-9 - 8 Եւ սրտագէտ Աստուածը նրանց վկայեց Սուրբ Հոգին տալով նորանց այնպես, ինչպէս տվեց մեզ: 9 Եւ նրանց ու մեր միջև ոչ մի խտրություն չդրեց, հաւատքով **սրբելով նորանց սրտերը:***

II. ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ:

9 Այնտեղ առյուծ չի լինիլու ու չար գազաններից ոչ մեկն այն տեղով չի անցնելու. Այդ տեղով պիտի գնան փրկվածները և Տիրոջ համար հավաքվածները:

Սաղ. 91:13 - 13 Դու կը քայլես առյուծների եւ իժերի վրա. առյուծի կորյուններին եւ վիշապին ոտով կոխ կտաս:

Թեև մենք այս փողոցի վրա հնարավոր է հանդիպենք փորձությունների, սակայն թշնամին չի կարող մտնել դրա վրա: Նա հարձակվում է մեզ վրա, բայց մենք դրա դեմ պայքարելու համար զինված ենք հոգևոր զենքերով:

Ճշմարտություն, Արդարություն, Խաղաղություն, Հավատք, Փրկություն, Աստծո Խոսք, Հոգվ աղոթք:

*Ղուկ. 10:19 - 19 Ահա իշխանությունը տվի ձեզ, կոխել օձերի եւ կարիճների վրա եւ թշնամու **բոլոր զորության վրա,** եւ ձեզ ոչինչ չի վնասի:*

2 Տիմ. 4:17-18 - 17 Բայց Տէրն ինձ մօտ կանգնեց, եւ զօրացրեց ինձ, որպեսզի ինձանով հաստատվի քարոզությունը, եւ բոլոր հեթանոսները լսեն այն. եւ ես ազատվեցի առյուծի բերանից: 18 Եւ Տէրն ինձ կ՚փրկի ամեն չար բանից եւ կ՚ազատի կ՚հասցնի իր երկնային արքայությանը. որին լինի փառք հավիտեանս հավիտենից. Ամէն:

III. ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ:

10 Եւ Տիրոջ փրկվածները պիտի վերադառնան ու բարձրաձայն երգերով գան Սիօն, եւ նորանց գլխի վրա հավիտենական ուրախություն պիտի լինի. ուրախությունը պիտի դիմավորի նրանց, ցավը, տրտմությունն ու հեծությունը փախչելու է:

Մեզնից յուրաքանչյուրն ունի փափագներ, որ կարող են բավարարվել միայն Հիսուսով: Տերը մեզ անապատից դուրս բերեց Իր Սրբության մայրուղի, որտեղ մենք կարող ենք ցնծալ:

Առակ. 17:22 - Ուրախ սիրտը օգտակար է ինչպէս դեղ, բայց կոտրած սիրտը ոսկորները կչորացնէ:

Ղուկ. 15:6,9,22-24 - 6 Եւ տուն գալով, բարեկամներին եւ դրացիներին կ՚կանչի եւ նորանց կ՚ասի. ***Ուրախացէք ինձ հետ.*** *որովհետեւ իմ կորած ոչխարը գտա:*

9 Եւ երբոր կ՚գտնի, բարեկամներին եւ դրացիներին կ՚կանչի եւ կ՚ասի. ***Ուրախացէք ինձ հետ.*** *որովհետեւ դրամը գտա, որ կորցրել էի:*

22 Հայրն էլ ասեց իր ծառաներին. Առաջի պատմուճանը հանեցէք եւ հագցրէք նորան, եւ մատանի դրէք նորա ձեռքին, եւ կօշիկներ նորա ոտներին: 23 Եւ մսացու եզը բերէք մորթեցէք, եւ ուտենք՝ ***ուրախ լինենք.*** *24 Որ այս իմ որդին մեռած էր, եւ կենդանացավ. եւ կորած էր, եւ գտնվեց. եւ սկսեցին զվարճանալ:*